


7597



1927

391-99 Ա
F-89

ԲՐԱՀ ՍԻՐՈՒՀԸՑՄԻՔ...
ԶԱՐԵՎԸ
2011



Հ Ե Շ 2 0 0 3

Տպագր. «ՏԱՐՈՆ»
ՓԱՐԻԶ
1927

«ԳՈՐԾՎՐԴԱԿԱՆ» ՄԱՏԵՆԱՅԱՐ ԹԻՒ 2

ԲՈՒՆԻ
ԲՈՒԼԵՏՈՒՓ...
ԶԱՒԵՇՏ



Տպագր. «ՏԱՐՈՆ»
ԳԱՐԻԶ
1927

27300-42

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԴՐԿՑՈՍ	գործակատար — քար-
Վ.ԱՀԱՆ	տուղար 48 տարեկան
ԼԵԽՈՆ	
ԲՐՈՒ. ՅԵԿՈԲ	
ՀՐԱՆՏ Վ.ԱՐԴԱՆԵԱՆ	
ՇՈԽԵԱՆ	Հրանտի կինը
ՍԵԼՄԱ	Վահանի կինը
Ա.ԱՐԴՈՒՀԻ	Լեռնի կինը
ՄԱՆՆԻԿ	Սպասուհի

(Տեսարանը տեղի կ'ունենայ Պոլիս. —)



Տեսարանը կը ներկայացնէ Պոլսոյ ունեւոր տան մը հիւրասրահներէն մէկը,որ շըշալատուած է ուրիշ պատիկ սենեակներով։ Հարուստ կահաւորում։

Վարագոյքը բացուելուն, Մաննիկ ներս կ'առաջնորդէ Ազոկտոսը, պայուսակ մը թեւին տակ։

◆◆◆

Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Տ Ե Ս Ա. Ր Ա. Ն

ՄԱՆՆԻԿ — ԱԴՐԿՑՈՍ

ՄԱՆՆԻԿ. — Հո՛ս նստէ, Պ. Ադրկտ'ոս։

ԱԴՐԿՑՈՍ. — Ի՞նչո՞ւ հոս նստիմ... Պարոն լեռնին գրասունեակը ի՞նչ է եղեր, տեղէն փախե՞ր է... .

ՄԱՆՆԻԿ. — Այո՛, Պ. Ադրկտոս . . . այսինքն թէ, առժամարար սեղանդ . . . տեղէն փախած է։ Այօր՝ Պարոն լեռնը թէյ-պըին մը կը սարքէ, գիտե՞ս։

ԱԴՐԿՑՈՍ. — Ի՞նչ կը սարքէ ըսիր։ Հելէ սուիկա մէյմըն ալ ըսէ՛ նայիմ։

ՄԱՆՆԻԿ. — (Նատիկ-իատիկ) Թէյ-պըին մը։

Այսինքն՝ կեցի՛ր բացատրեմ: Թէյասեղան մը
որմէ վերջ, տիկիններն ու պարոնները պրիճ
խաղալու պիտի նատին:

ԱԴՈԿ.— Հասկցա՛յ, հասկցա՛յ: Գէշ մը-
տածում չէ: (Մեկուսի) Թէյասեղան կու տառա-
նունդ կը փառաւորուի, և ծախքերդ թուղթէն
կը հանես: Աւանակը՝ ուտողն է, առւողը չէ:
(Պահ մը) Նոր նոր անուններ, եղանակը . . . ես
ինտոր միտքս պահեմ . . . Պօքեր . . . Մախա-
րա . . . Հայտէ նորէն պրիճը ինչ է նէ, ամա-
թէյ մըն ալ թախմիշ ըրեր են, եկուր տէ հաս-
կցիր: (Մաննիկին) Եւ քանի՞ ժամ պիտի քշէ
այդ խալթը . . .

ՄԱՆ.— (Գրան մօտ) Տակաւին չէ ըս-
կըսած անգամ . . . Տիկինէն և Պարոնէն զատ,
կայ Բրօֆէսէօր Յակոբը, յայտնի մագնիսացնո-
ղը . . . յետոյ, յետոյ, երիտասարդ զոյգ մը, նոր
նոր ամուսնացածներ՝ Տէր և Տիկին վահան . . .
Երիտասարդ կինը եթէ տեսնալու ըլլաս խելքդ
գլխէդ կը թոփ, այնքան որ գեղեցիկ է, կլո-
րիկ և քնքուշ:

ԱԴՈԿ.— Ուժք . . . ինձի ի՞նչ . . .

ՄԱՆ.— Այդ ի՞նչ կը նշանակէ: Երիտա-
սարդ ու աղուոր կնիկ մը տեսնելով բան մը
չե՞ս ըլլար դուն:

ԱԴՈԿ.— Ի՞նչ կ'ըլլան քի. . . : Ես բան
չեմ ըլլար:

ՄԱՆ.— Գնա՛ բանդ, ստախօ՛ս: Վան-
քին հաւերը համով են քեզի համար, չէ՞ . . .

ԱԴՈԿ.— Որո՞ւ կ'ըսես կոր ատիկա, Օ-
րի՛որդ: Ինձի՞ս ես քառասունը ութը տարեկան
եմ այսօրուան օրս և քառասունը ութը տարիէ
ի վեր կոյս եմ, կո՛յս, հասկցա՞ր:

ՄԱՆ.— Անկարելի բան է, Պ. Ադոկտոս:

ԱԴՈԿ.— (Հպարտ) Խօսքիս չհաւատացողը
կը փորձէ: Կոյս մնացած եմ, կ'ըսեմ կոր:

ՄԱՆ.— Նայէ՛, ես քեզի պէս չեմ, Պ.
Ադոկտոս: Ես այսօրուան օրս քսան երկու տա-
րեկան եմ և տասը տարի կ'ընէ որ կուսութիւ-
նըս վրայ տուած եմ:

ԱԴՈԿ.— Քեզի գէշ . . . Ատիկա կը ցու-
ցընէ որ նպատակ չունեցող աղջկան մէկն
ես . . . իսկ ես իտիկալ մը ունիմ: Ես ուզած եմ
անրիծ և անարատ մնալ կեանքս գիտութեան
նուիրելու համար . . . իմ սա կարճուծուկ խել-
քովս, գիտնականը պէտք է մաքուր մնայ վար-
գապետի պէս:

ՄԱՆ.— Վարդապետի՞ պէս: Անոնք, ինձ-
մէ քենէ աւելի կրակոտ մարդիկ են . . . այդ
ձիւղին մէջ:

ԱԴՐԿ.— ՏԵՇ Աստուած, դուն քրիստոնէայ չե՞ս, ա'յ աղջիկ:

ՄԱՆ.— Այո՛, բայց . . . : Ինչ որ է, թողունք այդ բոլորը: Խօսքը մէջերնիս, դժուարութիւն քաշած ըլլալու չես:

ԱԴՐԿ.— Ինչի՞ համար . . .

ՄԱՆ.— . . . Ըսածիդ պէս, անբիծ և անսարատ մնալու համար . . . : Քեզի ձեռք անցունել ուզող մը եղած է արդեօք:

ԱԴՐԿ.— Ինծի՛ նայէ . . .

ՄԱՆ.— Ի՞նչ կը բարկանաս . . . Արդեօք կը կարծես որ աղուոր-աղուոր մէ՞կն ես . . .

ԱԴՐԿ.— Իմ՝ բարյական գեղեցկութիւնն, միակը՝ Օրիորդ, այո՛, միակ ցանկալի գեղեցկութիւնը:

ՄԱՆ.— Ի՞նչ կ'ըսէ խուշիկը . . . Զրմէն . . . գուն և ես, և ահա՛ աշխարհ գլխվար կը գառնայ:

ԱԴՐԿ.— Ինծի՛ նայէ, ես այդ տեսակ կատակներէն շատ չեմ ախորժիր: (Պահ մը) Գործի սկսինք:

ՄԱՆ.— (Սեղանը պատրաստելով) Հոս նըստէ, Պ. Աղոկառա: (Աղոկտոս կը նստի) Հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչ կ'աշխատիս:

ԱԴՐԿ.— Զանազան գիրքերէ որոշ տեղ կ'ընդօրինակիմ Պարոն Լեւոնին համար: (Պայուսակէն գիրքեր կը հանէ)

ՄԱՆ.— Վէպէ է . . .

ԱԴՐԿ.— Ո՛չ, տխմար արարած, վէպը ի՞նչ գործ ունի քովս . . . Շատ աւելի լուրջ գիրքեր են ասոնք . . . : Պարոն Լեւոնը, այդ Բրօֆէսէօր Յակոբին շնորհիւ, հոգե-բժշկական ծածուկ գիտութիւններու միջամուխ եղած է, և այս գիրքերը թելադրութեան վրայ կը ճառին . . . (կը կարդայ) «Կամքը և իր արտայայտութիւնները», «Շարժող մեքենային արտաքսաւորումը», «Անթել հեռազդացութիւնը» կամ «Անթել թելէփաթիա»ն:

ՄԱՆ.— Կ'ածիլես կոր, Պ. Աղոկառ'ս . . . Եյս բոլորին մէջ տակաւին քու ըրած գործիդ ինչ ըլլալը չլսեցի:

ԱԴՐԿ.— Ես . . . ես . . . էջ մը մէկէն, ուրիշ էջ մը միւսէն առնելով մասնաւոր տետրակի մը մէջ կ'ընդօրինակեմ, և իմ պաշտօնը է այգաբէսով կազմել գիրք մը որ Պարոն Լեւոնին փառապանծ անունը պիտի կրէ և հըրատարակութեան պիտի տրուի: Թերթ, թուղթ, գիրք, էրեկ-մարդ, կնիկ-մարդ, բժիշկ, ատամ-նաբոյժ, փաստաբան, մանկաբարձ, ծեր, պառաւ, երախայ, բոլորը, բոլորը իրար պիտի անցունէ այդ գիրքը, պիտի տեսնա՛ս . . .

ՄԱՆ.— Իրա՞ւ . . . եւ ի՞նչ պիտի ըլլայ գիրքին անունը:

ԱԴՐԻ. — Տէ՛ր Աստուած, դուն քրիստոն~
հայ չե՞ս, ա՛յ աղջիկ:

ՄԱՆ. — Այո՛, բայց . . . : Ի՞նչ որ է, թու~
րունք այդ բոլորը հօսքը մէջերնիս, դժուա~
րութիւն քաշած ըլլալու չես:

ԱԴՐԻ. — Ի՞նչի՞ համար . . .

ՄԱՆ. — . . . Քասձիդ պէս, անրիծ և անա~
րատ մնալու համար . . . : Քեզի ձեռք անցու~
նել ուղող մը եղած է արդիօք:

ԱԴՐԻ. — Ի՞նձի՞ նայէ . . .

ՄԱՆ. — Ի՞նչ կը բարկանաս . . . Արգեօք
կը կարծես որ ազուորազուոր մէ՞կն ես . . .

ԱԴՐԻ. — Իմո՛ բարոյական գեղիցկութիւն
է, միակը՝ Օրիորդ, այո՛, միակ ցանկալի գե~
ղիցկութիւնը:

ՄԱՆ. — Ի՞նչ կ'ըսէ խուշիկը . . . Զը~
սե՞ս . . . դուն և ես, և ահա՛ աշխարհ գլխի~
վար կը գառնայ:

ԱԴՐԻ. — Ի՞նձի՞ նայէ, ես այդ տեսակ
կատակներէն շատ չեմ ախորժիր: (Պահ մը)
Գործի սկսինք:

ՄԱՆ. — (Սեղանը պատրաստելով) Հոս նըս~
տէ, Պ. Ագոկտոս: (Աղոկտոս կը նստի) Հետա~
քրքիր եմ գիտնալու թէ ի՞նչ կ'աշխատիս:

ԱԴՐԻ. — Զանազան գիրքերէ որոշ տե~
ղեր կ'ընդօրինակեմ Պարոն Լեւոնին համար:
(Պայուսակէն գիրքեր կը իմսէ)

ՄԱՆ. — Վէպէ է . . .

ԱԴՐԻ. — Ո՛չ, տխմար արարած, վէպը
ի՞նչ գործ ունի քովս . . . Շատ աւելի լուրջ
գիրքեր են ասոնք . . . : Պարոն Լեւոնը, այդ
Բրօֆէսէօր Յակոբին շնորհիւ, հոգեւթչկական
ծածուկ գիտութիւններու միջամուխ եղած է,
և այս գիրքերը թելազութեան վրայ կը ճա~
ռեն . . . (կը կարւայ) «Կամքը և իր արտայայ~
տութիւնները», «Շարժող մեքենային արտաք~
սաւորումը», «Անթել հեռազգացութիւնը» կամ
«Անթել թելէփաթիս»ն:

ՄԱՆ. — Կ'ածիլես կոր, Պ. Ագոկտոս . . .
Այս բոլորին մէջ տակաւին քու ըբած գործիդ
ինչ ըլլալը չլսեցի:

ԱԴՐԻ. — Ես . . . ես . . . էջ մը մէկէն,
ուրիշ էջ մը միւսէն առնելով մասնաւոր տե~
տրակի մը մէջ կ'ընդօրինակեմ, և իմ պաշտօ~
նըս է այդպէսով կազմել գիրք մը որ Պարոն
Լեւոնին փառապանծ անունը պիտի կըէ և հը~
րատարակութեան պիտի տրուի: Թերթ, թուղթ,
գիրք, էրիկ-մարդ, կնիկ-մարդ, բժիշկ, ատամ~
նաբոյժ, փաստաբան, մանկաբարձ, ծեր, պա~
ռաւ, երախայ, բոլորը, բոլորը իրար պիտի ան~
ցունէ այդ գիրքը, պիտի տեսնա՛ս . . .

ՄԱՆ. — Իրա՞ւ . . . Եւ ի՞նչ պիտի ըլ~
լայ գիրքին անունը:

ԱԴՈԿ.— Գիրքին անունը . . . գիրքին
անունը . . . գիրքին անունը . . .

ՄԱՆ.— Զ'ըսե՞ս, մարդ Աստուծոյ:

ԱԴՈԿ.— Քնածութիւնը մինակ՝ և երկու
հոգիով:

ՄԱՆ.— Գէշ չէ, աղուոր է: Դուն հաս-
կցեր ես, ատիկա կը բաւէ:

ԱԴՈԿ.— Բնականաբա՛ր, այսինքն թէ՝
բաւական պարզ է, ըսել կ'ուզեմ:

ՄԱՆ.— Ես ի՞նչ ըսի որ . . . Հակառա-
կը չ'ըսի կարծեմ: Ինչ որ է: Հիմա հանդիսատ ես,
ալ բանի մը պէտք չես ունենար:

ԱԴՈԿ.— Հանդիսատ եմ այսպէս և բա-
նի մը պէտք չ'ունիմ:

ՄԱՆ.— (Ձինքը կը դիտէ) Տէր Աստած,
այսքան ալ տպեղ մարդ . . . ցուցա՛նք մը,
չգանուած ցուցանք մը: (Լեւոն ներս կը մտնէ)
Ո՞հ, Պարոն Լեւոնը . . .

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՆՈՅՆՔ ԵՒ ԼԵՒՈՆ

ԼԵՒՈՆ.— Այդ ի՞նչ է, Մաննիկ: Խելքդ
ո՞ւր է այսօր:

ԱԴՈԿ.— (Ոտքի կ'ելլէ) Պարոն Լեւոն . . .

ԼԵՒՈՆ.— Բարե՛ւ, Ադոկ, բարե՛ւ . . . (Ման-
նիկին) Պ. Ադոկտոսը հո՞ս ես տեղաւորեր:

ՄԱՆ.— Դուք չըսի՞ք որ ձեր գրասեն-
եակը բռնուած պիտի ըլլար այսօր:

ԼԵՒՈՆ.— Այս', բայց հոս ալ պիտի ծխենք
հիմա . . .

ՄԱՆ.— Ուրեմն՝ ո՞ւր պէտք է տեղա-
ւորել Պ. Ադոկտոսը: Ճաշաբահին մէջ արդեօք:

ԼԵՒՈՆ.— Հո՞ս ալ չըլլար, լուացարան տար:

ՄԱՆ.— Գլխուս վրայ: Եկուր, Պ. Ա-
դոկտոս, սա փոածներդ հետդ առ և լուացարան
երթանք . . .

ԱԴՈԿ.— Լուացարա՞ն . . .

ԼԵՒՈՆ.— Շո՞ւտ ըրէ, թէյը վերջացաւ:

ԱԴՈԿՑՈՍ.— (Դուրս կ'ելլէ մէկ - երկու
գիրք մոռնալով այստեղ) Լուացարա՞ն, լուա-
ցարա՞ն: Եթէ ասանկ երթայ ճամբաս բաց է
մինչեւ գործարան: (Դուրս կ'ելլէ Մաննիկին
իետ)

Ե Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ԼԵՒՈՆ, ՎԱՀԱՆ, ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ, ՎԱՐԴՈՒՀԻ
ԵՒ ՍԵԼՄԱ.

ԼԵՒՈՆ.— Գիրքերը հոս մոռցեր է, ցնորա-

Ժը: (Գիբքերը կը տեղաւորէ տեղ մը) Որո՞ւն
հոգը, թող գայ առնէ: Սա՛ կողմ եկուր, վա-
հա՞ն, սիկառէթ մը ծխենք:

ՎՀՆ.— (Ներս կը մտնէ) Շնորհակա՛լ եմ,
շնորհակալ եմ:

ՎԱՐԴՈՒՀԻՆ.— Պ, վահա՞ն չէ՞ք ծխեր:

ՍԵԼՄ.— Ո՛չ անուշս, ամուսինս ծխելու
սովորութիւն չունի:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Վստահ եմ որ այդ սովո-
րութենէն դուք ետ կեցուցած էք զինքը, այն-
պէս չէ, Տիկին:

ՍԵԼՄ.— Ճշմարի՛տ է, Բրօֆէսէօր: Նոր
նոր նշանուեր էինք և իմ առաջին խնդրանքս
այդ եղաւ... Մուխը՝ համբոյրին համը կը փոխէ:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Եւ յետոյ շատ վատառողջ
բան է, շատ աղտոտ:

ՎՀՆ.— Ատիկա շատ ճիշտ է:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Ծխելը՝ մարդուս յիշո-
ղութիւնը կ'ոչնչացնէ և կ'ասպուշցնէ մարդը:

ԼԵԽՈՆ.— (Յօտենալով) Սիկառէթ մը . . .

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Հաճոյքով, բարեկա՛մ:

ՍԵԼՄ.— (Կը մօտենայ վահանին եւ յած
ձայնով) Խո՛ւշս . . .

ՎՀՆ.— (Յած ձայնով) Ի՞նչ է, խուշի՞ս:

ՍԵԼՄ.— Կը պաշտեմ քեզի:

ՎՀՆ.— Իսկ ես՝ խելքս գլխէս կը թըռ-
ցնեմ քեզի համար:

ՍԵԼՄ.— Իրա՞ւ կ'ըսես:

ՎՀՆ.— Զե՞ս հաւատար: Բերնիդ վրայ պա-
շէկ մը դնե՞մ պատմէլու համար:

ՍԵԼՄ.— Ամենուն առջեւ չեմ ուզեր:

ՎՀՆ.— Զե՞ս ուզեր:

ՍԵԼՄ.— Շատ կ'ուզեմ, բայց . . .

ՎՀՆ.— (Կը մօտենայ) Ուրիմն . . .

ՍԵԼՄ.— Ո՛չ, ո՛չ, հիմա չէ, խելօք կեցիր:
ՎԱՐԴ.— (Կը մօտենայ) Ի՞նչ կայ, ի՞նչ

կայ:
ՍԵԼՄ.— Ամուսինս է, խելօք չկենար:

Ուրիշ անգամ հետը գուրս պիտի չ'ելեմ: Խայ-
տառակ ըրաւ զիս ամենուն առջեւ:

ՎՀՆ.— Մի՛ հաւատաք, Տիկին, մի՛ հաւա-
տաք: Ան է որ անպատշաճ առաջարկութիւն-
ներ ըրաւ ինծի:

ՍԵԼՄ.— (Բարկացած) Անսամօթ ես, ու-
րիշ ըսելք չ'ունիմ: (Վարդուիիին) Երթանք
պրիճը սկսինք մենք:

ԼԵԽՈՆ.— Ո՛չ, համբերեցէք, համբերեցէք,
երկու հոգի եւս պիտի գան:

ՎԱՐԴ.— Բայց ատիկա պատճառ մը չէ,
ուրիշ բան կը խաղանք հիմակուհիմակ: Բրօ-
ֆէսէօնն ալ միասին կ'առնենք:

ՍԵԼՄԱՆ. — (ՕԳՏՈՒԵԼՈՎ որ բոլորը կունակ դարձուցած են) **ԱՌ ՔԻՂԻ:** (Կը համբուրէ ա. մուսինը)

Զ Ո Ր Ռ Ո Ր Դ Տ Տ Ե Ս Ա Ր Ա Յ Ա

ՎԱՀԱՆ, ԼԵՒՈՆ և յետոյ ԱԴՐԿՑՈՍ

ԼԵՒՈՆ. — (ՄԵԼԻՆ ի մէկ դառնալով) **ՏԵ-
ԱՎ'Յ, ԹԵՍԱ'Յ . . .** (Մելմա կը փախչի)

ՎՀՆ. — Կը ներես, չէ՞: Անվայել էր տանդ
մէջ:

ԼԵՒՈՆ. — Ինչո՞ւ, ինչո՞ւ: Ընդհակառակը,
խիստ վայելուչ և խիստ հմայիչ էր տեսարանը:
Ես երբ ամուսնացայ, այսինքն ասկէ մօտեռ-
րապէս երեսուն տարի առաջ, շատ աւելի երա-
խայ էինք, և շատ աւելի երախայի բաներ ը-
րինք վարդուհիին հետ: Գալ տարի, գուք ալ
մեզի պէս պիտի ծիծաղիք այս բոլորին վրայ:
Խօսքը մէջէրնիս, շատ անուշիկ է կնիկդ:

ՎՀՆ. — Անուշիկ է, չէ՞: Շատ կը սիրեմ
զինքը, և տարօրինակը հոն է որ չէի կարծեր
թէ պիտի կարենամ այսչափ սիրել:

ԼԵՒՈՆ. — Ուրեմն ամուսնացած ատենդ
չէի՞ր սիրեր զինքը:

ՎՀՆ. — Ե՞ս, բնա՛ւ երբէք:
ԼԵՒՈՆ. — Քանի որ այդպէս էր ինչպէ՞ս
ամուսնացար:

ՎՀՆ. — Երկար է պատմութիւնը: Ասկէ
երեք տարի առաջ Գնալը կզղի կը բնակէի: Հոն՝
խիստ վայելուչ զոյցի մը հետ ծանօթացայ: Կի-
նը՝ —կտո՞ր մը — թէեւ իրականին մէջ քա-
ռասունին կը մօտենար, բայց բերանացի օր մը
օրանց երեսունը հինգը չ'անցաւ:

ԼԵՒՈՆ. — Կը հասկնամ. . . ուտուելիք կը-
տոր մը ըսել կ'ուզես:

ՎՀՆ. — Ընդհակառակը . . . ուտող բայց
ո՛չ ուտուելիք: Միայն թէ՝ չէ՞ որ ծովին օդը
ախորժակ կը բանայ... Եթէ Բերա եղած ըլ-
լայի ո՛վ ուշադրութիւն պիտի դարձնէր անոր,
մանաւանդ որ կրակոտ և հրամայող կիներէն
բնաւ... համ չեմ առներ...

ԼԵՒՈՆ. — Կրակոտ էր, չէ՞:

ՎՀՆ. — Եւ հրամայող, ծայրաստիճան: Հե-
տը՝ ծուկ որսալու կ'երթայինք...: Գնալը գա-
ցած ես, չէ՞ . . . հոն՝ բլուրի մը վրայ մենաս-
տան մը կայ, և այդ բլուրին հետեւ ամայի
ծովեղերք մը, լեցուն քարերով: Տեղ մը՝ աղ-
որ քարայր մը կայ, ուր շատ շատեր կ'երթան
ապաստան գտնել, տեսակ տեսակ... բաներ ը-
նելու համար, ինչե՛ր, ինչե՛ր հո՞րծ եփած

ին, զիտնաման...: Ի՞նչ որ է... որ մը՝ այդ կողմը պտոյտի գացեր էինք միասին: Յանկարծ՝ անձրեւի բոնուեցանք: Ստիպուած՝ մենք ալ այդ քարայրը մտանք: Զմուած ըլլայի: Մէյ մըն ալ, կ'ուզես որ այս տիկինը մէկէն ի մէկ վիզիս պլլուի և գետին նետուի ինծի հետ, պոռալով.— «Ամօթ է, Պ. Վահան, ամօթ է»:

Լեինն.— Տեսա՞ր խելացի կնիկը...

ՎՀՆ.— Ի՞նչ ըլլալս, չգիտցայ... բայց պէտք էր գործի ձեռնարկել այլապէս՝ մինչևւ իսկ ձուկերը վրաս պիտի խնդային... Եւ երեք տարի շարունակ այդ կնոջ խալալիքը եղայ: Ամառները, ամէն տարի, ստիպուած էի Գնալը օդափոխութեան երթաւ, և... այցելել այդ քարայրը գոնէ որը անզամ մը: Ալ չորս ոսկոր ֆնացեր էի:

Լեինն.— Թող ձգէիր քալէիր...

ՎՀՆ.— Բաելլ զիւրին է, բարեկամ: Ամէն անզամ որ ձգելու խօսք կ'ընէի, աղուոր ծեծ մը կը քաշէր ինծի:

Լեինն.— Կատակի համար, անշուշտ:

ՎՀՆ.— Ի՞նչ կատակ: Շնորհքով, փառաւոր ծեծ: Ես կնիկ — ծեծող մը եղած չ'ըլլաւով, լոիկ միջիկ կ'ուտէի մինչեւ որ հանդարտէր: Հանդարտելուն պէս...

Լեինն.— Ե՞տքը

ՎՀՆ.— Ե՞տքը... Քեզի բան մը ըսե՞մ... Ծեծ ուտելլ գործիս կուգար: Ալ անհանդուրժելի գարձած էր: Որոշեցի ուրեմն ժամանակին ամուսնանալ: Եւ եղելութիւնը հազորդեցի իրեն վերջին վայրկեանին միայն, երբ ամէն բան լմբնած էր...

Լեինն.— Ո՞վ զիտէ որչափ զայրացաւ...

ՎՀՆ.— Կը կարծե՞ս... բնա՛ւ: Ընդհակառակը՝ ծայրաստիճան հանդարտ և խաղաղ էր: Նայէ՛ ինչ ըսաւ, — «կարեւորութիւն չունի, վահան, որովհետեւ ես զիտէի որ օրին մէկը անհրաժեշտօրէն դուն պիտի ամուսնասա... եւ հիմա գուն կ'առնես աղջիկ մը պարզապէս անոր համար որ դրամ ունի: Եւ վստահ եմ որ գուն զայն չես սիրեր և չես կրնար արդէն սիրել: Ես նախանձու չեմ...»

Լեինն.— Շնորհաւորելի կին:

ՎՀՆ.— Զլիցաւ, բարեկամ... «Ես նախանձու չեմ... Բայց՝ զիտցած եղիր որ քուհումանուհիդ եմ շարունակ և կ'արդիեմ քեզի, կը հասկնա՞ս, կ'արդիլեմ քեզի ինձմէ բաժնուել: Քեզի շնորհ մը ըրած ըլլալու համար միայն, երեք ամիս արձակուրդ կուտամ քեզի, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Պայմանաժամը լրանալուն, գուն պարտաւոր ես գալ ինծի...: Եւ մի՛

փորձեր փախչակիլ, որովհետեւ այն ատեն...
բանդ բռւրդ է...

Լեինն. — Վա՛յ սարսափելի... Բայց՝ թե-
րեւս միտքը փոխած է հիմա:

ՎՀՆ. — Աւետարանին մէջ գրուած ալ ըլ-
լայ, չեմ հաւատար . . . Ես ապրանքս կը ճան-
չնամ...: Քարայրին խնդիրը ինծի հետ միայն
յաջողութիւն գտած էր: Այդ է պատճառը որ
հանգստութիւնս կորսնցուցած եմ մէկ քանի
օրէ ի վեր, որովհետեւ պայմանաժամը երէկ...
աւարտեցաւ: Կը հասկնա՞ս:

Լեինն. — Հեռու տեղ մը գնա՛, ճամբոր-
դէ . . .

ՎՀՆ. — Այդ որոշումը շատոնց է որ առած
եմ . . . Տոմսակներս ալ զրպանս են . . . Վաղը՝
կը մեկնիմ եգիպտոս... Բայց դուն չես ճանչ-
նար Շուշանը:

Լեինն. — Այդ կնոջ անո՞ւնն է . . .

ՎՀՆ. — Այո՛ . . . Ան աշխարհը իրար կ'ան-
ցունէ, զիս գտնելու համար: Մանաւանդ որ
հիմա քառասունը հինգը անցուկ է . . .

Լեինն. — Եւ երեսունը հինգ կը ցուցնէ...

ՎՀՆ. — Աւելին կայ, բարեկա՛մ: Որովհետեւ
ան ինձմէ աւանսակը չկրնար գտնել, ատիկա
անկարկի է, պահեցողութիւնը նոր եռանդ մը
տուած պիտի ըլլայ իրեն: Այդ ձեւով՝ հարա-

ւային Ամերիկա կամ Ափրիկէ իսկ փախչիմ, օ-
ձիքս դիւրին ձեռք պիտի տամ:

Լեինն. — Հոգդ մի՛ ըներ, հոգդ մի՛ ըներ,
վեց ամիսէն խնդիրը կը մոռցուի ... (Դուռը կը
զարնեն) Մտէք . . .

ԱԴՈՒ. — Դարձեալ ես եմ, Պ. Լեւոն:

Լեինն. — Ի՞նչ կայ նորէն... (Վահանին)
կը ներկայացնեմ, Պ. Աղոկտոս, իմ անձնական
քարտուղար-գործակատարս...

ԱԴՈՒ. — Եւ այնքան անձնական որ ա-
մէն տեղէ գուրս կը նետեն զիս: Հիմակ ալ
լուացարաբուժին զուրս կը նետէ զիս գետին-
ները, սեղաններուն վրայ մաս մը մաքուր և
մաս մըն ալ աղտոտ լաթեր դրած ըլլալով:
Դուր կ'ուզէք որ երթամ հիմա:

Լեինն. — Վարը...բակը... սետիր մը կայ...

ԱԴՈՒ. — Սետիրին վրա՞յ . . . Սետիրը
պակաս էր... եթէ ասանկ երթայ, վերջ ի վերջոյ
գործարանը պիտի թխմէք ինծի . . . (Դուռը եւ-
լելու վրայ) Հա՛, կը մոռնայի կոր . . . Պ. Լե-
ւո՞ն, Տիկինը ըստ որ ձեր սպասած հիւրերը
եկած են . . .

Լեինն. — Շա՛տ լաւ . . . շա՛տ լաւ: Շնոր-
հակալ եմ:

ԱԴՈՒ. — Զ'արժերք օքրթամ պէտքը գըտ-
նեմ... (Դուռը կ'ելլէ)  ZUUN-ԱՐՄ ՀՀ
Ա. Խ. Ա. ՄԱՅԱԿԱՎԻ ՀԵԿԱՆ

ՎՀՆ. — Պիթ պազարէն գտեր ես, այս
մարդը, ի՞նչ է: Քարտուղարէ զատ ամէն բանի
երեւոյթ ունի:

ԼԵՒՈՒ. — Հո՛գս... Զեռագիրներս կ'ընդօ-
րինակէ և այդքանը բաւական է ինձի: Քար-
տուղարի մակղիրը մասնաւոր դիտումով է որ
լում պահանջելու տեղ անուններով. . . գրպան-
նին կը լեցնեն: Եւ ասիկա իմ դործիս շա՛տ
կուգայ. . .

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ Գ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՆՈՅԵՔ. ՎԱՐԴՈՒԽԻ, ՀՐԱՆԴ և յետոց
ՇՈՒՇԱՆ ԵՒ ՍԵԼՄԱ

ՎԱՐԴ. — Այս ի՞նչ տեսակ տանուտէր ես
գուն, կեռն'ն...

ԼԵՒՈՒ. — Ի՞նչ եղաւ որ... Հա՛, իրաւունք
ունիս մոոցայ ներկայացնել:

ՎԱՐԴ. — Զեզի հիմա պիտի ներկայաց-
նենք երկար տարիներէ ի վեր ամուսնացած
էրիկ-կնիկ մը, որոնք կը մարմնացնեն իսկա-
կան և տիպար երջանիկ ամուլ... Տէր և տի-
կին վարդանեան:

ՎՀՆ. — (տեղին ցատքելով) Ի՞նչ . . . Տէր
և տիկին . . .

ԼԵՒՈՒ. — Վարդանեան... Հրանդ և Շու-
շան Վարդանեան... Ներս մտէք... սիրելի բա-
րեկամ:

ՀՐԱՆԴ. — Բարե՛ւ ձեզ... (Վահան) Դո՞ւն
ալ հոս ես, վահա՞ն:

ՎԱՐԴ. — Ի՞նչ է զիրար ճանչցա՞ք...

ՎՀՆ. — (նեղսիրտ) Այո՛ . . . Եւ ի՞նչպէ՞ս:
ՀՐԱՆԴ. — Եւ ի՞նչպէ՞ս... Երեք տարիէ ի-
վեր . . . Գնալը . . .

ԼԵՒՈՒ. — Ճշմարի՞տ: (Խնութալէն կը ճաթի):
ՎՀՆ. — (Հրանդին) Կարճ կապէ՛:

ՀՐԱՆԴ. — Երեք յաջորդական տարիներ
միասին անցուցած ենք ամառնային եղանակը
ԼԵՒՈՒ. — Այո՛, այո՛, գիտեմ:

ՀՐԱՆԴ. — Իրմէ լսած էք անկասկած: (Վա-
հանին) Ան չէ, բայց ի՞նչո՞ւ այս տարի Գնալը
չ'եկար, վահա՞ն:

ՎՀՆ. — Որովհետեւ. . . (ցած ծայնով) Կարճ
կապէ՛, լսի:

ՀՐԱՆԴ. — Կարճ կապէ՛մ... Ի՞նչը կարճ կա-
պեմ: Ի՞նչ ըսի որ...

ԼԵՒՈՒ. — Տիկին Շուշանն ալ բնական է,
միասին բերած էք, չէ՞:

ՀՐԱՆԴ. — Այո՛, այստեղ է: (Վահանին) Կը-

նոջդ հետ է: Ի՞նչ շուտ կը մտերմանան այս
կիները:

ՎՀՆ.— (Բարկացած) Լաւ . . . աղէկ . . .
հո'գս, ա'յ մարդ. . . (Մեկուսի) Բանս բուրդ է . . .

ՀՐԱՆԴ.— Հազիւ իրար ճանցան որ ար-
դէն իրարու քիթէ չեն բաժնուիր . . . Զարմա-
նալի բան մըն է ասիկա կիներուն մօտ . . .
Բայց՝ խօսքը մէջերնիս, պաշտուելու չափ աղ-
ւոր է կնիկդ. . . Այո՛. . . այո՛. . . կնիկս ը-
սաւ. . . Գոնէ այս ձմեռ, ա'լ ստէպ ստէպ զի-
րար կը տեսնենք . . . Շուշա՞ն: (Կը մօտենայ
դուռին)

ԼԵՒՈՆ.— (Վահանին) Խե՛ղճ տղայ. . . Ա՞ն
է . . .

ՎՀՆ.— Կասկած կա՞յ . . . Զէի կարծեր որ
քու տունդ անգամ անոր հանդիպելու վը-
տանգը կ'ըլլայ եղեր. . . Ոտքս կոտրեր և այ-
սօր պրիճ խաղալու չգայի այստեղ:

ԼԵՒՈՆ.— Ընդունէ՛ որ յանցանքը իմս չէ:
Ես ի՞նչ զիտնամ. . . Զարմանալի հանդիպում:
ՎՀՆ.— Զարմանալի, այո՛, քեզի հա-
մար բայց ոչ ինձի համար: (Ներս կը մտնեն
Սելմա եւ Շուշան)

ՇՈՒԾ.— Բարեւ ձեզ . . . բարեւ Պարոն
Վահան, ուրախ եմ ձեզ տեսնելուս:

ՎՀՆ.— Այնքան մըն ալ ես Տիկի՞ն,

ՇՈՒԾ.— Գիտէ՛ք որ Պ. Վահանը մեր էն
չին բարեկամներէն մէկն է:

ԼԵՒՈՆ.— (Ծիծաղելու վրայ) . . . Այո՛ . . .
ձեր ամուսինը ըստ արդէն . . .

ՇՈՒԾ.— Գնալը կղզին ծանօթացանք ի-
րարու. . . բայց ի՞նչ ունիք, դուք Պ. Լեւոն:

ԼԵՒՈՆ.— Ակռայի ցաւ մը . . . (Վահանին)
Ա'կ, չեմ կրնար կոր ինքզինքս բռնել, պիտի
ճաթիմ: (Դուրս կ'ելլի)

ՇՈՒԾ.— (Վարդուիիին) Ակռայի ցաւին
համար ուրիշ մեկնութիւն կուտան . . . Աչքեր-
նիդ բացէ՛ք . . . (Վահանին) Շատ գեղեցիկ եւ
շատ հրապուրիչ է ձեր կինը, Պ. Վահան:

ՍԵԼՄ.— Երեսին մի՛ ըսէք, չ'ախորժիր:

ՇՈՒԾ.— Քիչ առաջ՝ երբ կը խօսակցէ-
ինք, այնքան ծանօթներ գտանք փոխադար-
ձաբար մեր բոլորախքը որ . . .

ՎՀՆ.— (Մեկուսի) Եղաւ . . . ըլլալիքը:

ՇՈՒԾ.— Եւ խօսացանք մէկզմէկու որ
իրարմէ չբաժնուինք, որ ամէն օր իրարու
հետ ըլլանք, այնպէս չէ, Տիկի՞ն:

ՍԵԼՄ.— Այո՛, այո՛ . . .

ՎՀՆ.— Ես . . . չեմ կարծեր որ ատիկա
կարելի ըլլայ:

ՇՈՒԾ.— Ինչո՞ւ . . . Թէեւ դուք Եգիպ-

տոս պիտի մեկնիք, բայց առիկա պատճառ մը
չէ որ . . .

ՎՀՆ.— Ի՞նչ . . . դուք արդէն դիտէ՞ք:

ՍԵԼՄ.— Ի՞նձմէ . . . Ես ամէն ի՞նչ պատճեցի Շուշանին . . . (Շուշանին) կը ներես չէ՞ , որ
«Տիկին»ը զանց ըրի . . .

ՇՈՒԾ.— Եւ շատ լաւ ըրիր, Սելմա՞ս:

ՎՀՆ.— (Մեկուսի) Ես չ'ըսի՞ . . . Կատար-
եալ է ամէն բան . . .

ՍԵԼՄ.— (Ա. ահանին) Եւ աւելին կայ, Վա-
հա՞ն . . . Շուշանը մեր հետը պիտի գայ:

ՎՀՆ.— Ո՞ւրի: Եգիպտո՞ս:

ՇՈՒԾ.— Բժիշկները «առաք երկիր մը
գնա՞» ըսին:

ՎՀՆ.— (Մեկուսի) Ինձի թող հարցնէին
և ես երթալիք տեղդ կ'ըսէի անոնց:

ՍԵԼՄ.— Ի՞նչ հեշտ է բարեկամներով
ճամբորդելը:

ՎՀՆ.— (հեգնոտ) Հիանալի՝ բան է . . .

ՍԵԼՄ.— Գաղափարը իմս է. . . Նախ՝ Շու-
շանը չուղեց . . . Ես էի որ առմասակներսւն վե-
րաբերեալ բոլոր մանրամասնութիւնները առւի
իրեն:

ՎՀՆ.— (Նոյն) Եւ շատ աղէք ըրիր: Առ-
է աւելի աղուոր գործ մը չէիր կրնար ընել:
(Ներս կը մանէ լեւոն)

ԼԵՒՈՆ.— Խաղը սկսած է . . . Եւ տեղերը

բախտով որոշուած: Առաջին խաղին կը մաս-
նակցին.— Բրօֆ. Յակոբ, Հրանդ, Տիկ. Սելմա
և ես: Կինս չխաղար: Մնացեալները՝ երկրորդ
խաղին:

ՎՀՆ.— (զայրացկոտ) Բնակա՞ն է . . .

ՍԵԼՄ.— Շուշանը աչքէ չեռացնես. . . (ա-
կանչէն վար) հետր խաղի ալ չ'ելլաս... Դուքս
կ'ելլէ: Դուռները կը գոցուին: Շուշան եւ վա-
հան մինակ են:

Գ Ե Յ Ե Ր Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՎԱՀԱՆ ԵՒ ՏԻԿԻՆ ՇՈՒԾԸՆ

ՎՀՆ.— Վայ ինձի, վայ ինձի:

ՇՈՒԾ.— Լոէ՛, հիմա կնիկդ կը լոէ . . .

Շատ գեղեցիկ կնիկ մը ունիս, դիտե՞ս:

ՎՀՆ.— (Բարկացած) Տիմար մը:

ՇՈՒԾ.— Այդ այգէս է: Շատ շուտ կը
մտերմանայ կոր, չափէն աւելի շուտ:

ՎՀՆ.— Ինձի նայէ՛, դուն ե՞րբ պիտի
վերջացնես այս կատակերգութիւնը: Լոէ՛, դուն
օձիքս ե՞րբ պիտի ձգես:

ՇՈՒԾ.— Վահա՞ն, Վահա՞ն . . . շնորհալի
չս այսօր:

ՎՀՆ. — Զգո՛յ, որովհետեւ երբ համբերութիւնս հատնի, վա՛յ քեզ . . . Ալ չափը անցուցիր . . .

ՇՈՒԾ. — Երախա՛յ, ըսածդ, ըրածդ, ուշածդ չես գիտեր:

ՎՀՆ. — Իսկ ի՞նչ է քու ուղածդ, տեսնեմ:

ՇՈՒԾ. — (Բազմոցին վրայ) Նախ՝ հոս եռ կուր և նստէ . . .

ՎՀՆ. — Ո՛չ:

ՇՈՒԾ. — Անմիջապէ՛ս, կ'ըսեմ քեզի . . . Հոս ելուր և նստէ: (Ոտքի կ'ելլէ կը բռնէ վահանին օձիքէն եւ բռնի կը նստեցնէ բազմոցին վրայ) Այս ի՞նչ կը նշանակէ, տեսնեմ . . . ինծի հպատակիւր մոռցա՞ր: Համբուրէ զիս նայիմ:

ՎՀՆ. — Այդ էր պակաս:

ՇՈՒԾ. — Համբուրէ՛ կ'ըսեմ, թէ ո՛չ ապակը կ'ուտես:

ՎՀՆ. — Ուփ . . . (կը իամբուրէ)

ՇՈՒԾ. — Էսէ որ կը սիրես զիս . . .

ՎՀՆ. — Ո՛չ:

ՇՈՒԾ. — Էսէ՛, կ'ըսեմ, եթէ ո՛չ . . .

ՎՀՆ. — Հա՛, հա՛, կը սիրեմ քեզ:

ՇՈՒԾ. — Ասկէ լաւ: Եռանդով, կրակով:

ՎՀՆ. — (Զայրացկոտ) Կը սիւրեմ քեզ . . .

Ուփ . . .

ՇՈՒԾ. — Այդպէ՛ս . . . Իսկ դուն, Վահանիկս, չես կրնար երեւակայիլ ի՞նչչափ երջանիկ եմ քեզ տեսնելուս, ի՞նչ անուշ օրեր պիտի անցունենք դարձեալ իրարու հետ:

ՎՀՆ. — (կը փորձէ ոտքի ելլել) Ի՞նչ . . .

Արդեօք սխա՞լ հասկցայ:

ՇՈՒԾ. — (ստիպելով որ նստի) Նստէ՛ . . . Ի՞նչ անուշ օրեր պիտի անցունենք դարձեալ . . . Պիտի խածնեմ քեզ, պատառ պատառ պիտի ըսպիտի խածնեմ քեզ, այնքան որ կը ցանկամ քեզ ցաւ- ցունել:

ՎՀՆ. — Տիկի՞ն, միթէ կարո՞ղ եմ լըր- ջօրէն խօսիւ:

ՇՈՒԾ. — Ո՛չ, . . . Բերա սենեակ մը վար- ձած և կահաւորած եմ, հոն է որ պիտի գաս:

ՎՀՆ. — (Փախսելով) Ո՛չ, պիտի չգամ:

ՇՈՒԾ. — Էսէ որ պիտի գաս, թէ ո՛չ ծեծը կ'ուտես:

ՎՀՆ. — Հո՞գս, կը պոռամ, եւ բոլորը ներս կը վազեն:

ՇՈՒԾ. — Ուզածս ալ ան է: Ես գայթակ- ցութենէն չեմ վախնար:

ՎՀՆ. — Ա՛խ աս կնիկը, ա՛խ աս կնիկը:

ՇՈՒԾ. — Պիտի գա՞ս:

ՎՀՆ. — Պիտի գամ:

ՇՈՒԾ.— Եւ վազը կը մեկնինք գէպի
եղիպտոս:

ՎՀՆ.— Ես կը հակառակիմ ատոր... : Հա-
ւանական է որ մենք չմեկնինք:

ՇՈՒԾ.— Քանի որ այդպէս է... չենք
մեկնիր:

ՎՀՆ.— Այս եղածը չտեսնուած բան է,
Քենէ փախչելու և օժիքս ազատելու համար էր
որ այս ճամբորդութիւնը որոշեր էի բնել...
Եւ դուն հիմա միջոցը կը դանես ինքնինքդ
հրաւիրելու ...

ՇՈՒԾ.— Ես քեզի կանխաւ ըսեր էի
այս բոլորը... Երեք ամսուան արձակուրդ մը,
և ատիկա մեծ բան էր արդէն... Դուն չես
գիտեր թէ տիսուր էր Գնալըն առանց քեզի:
Չուկ որաւլու ելած միջոցիս, քու կարօտդ զիս
չարաչար կը տանջէր:

ՎՈՀԱՆ.— Կամաց ըսէ':

ՇՈՒԾ.— Հապա մեր ծովահայեաց քա-
րայրը ուրտեղ բանութիւն բանեցուցիր վրաս...

ՎՀՆ.— Ե՞ս, բոնութիւն բանեցուցի...
Ընդհակառակը դուն էիր որ...

ՇՈՒԾ.— Հոդ չէ, արդիւնքը միեւնոյն
է... Այս, այնչափ տառապեցայ... Բայց հոդ
չէ, խօսք էի տուեր... Արձակուրդը հիմա ա-
ւարտեցաւ... Ուրեմն՝ իմ նախկին տեղս կը

գրաւեմ գարձեալ և կը պահանջեմ որ... իմս
ըլլաս գարձեալ:

ՎՀՆ.— Բայց... Տիկին... կացութիւնը
փոխուած է:

ՇՈՒԾ.— Ի՞նչէ՞ս:

ՎՀՆ.— Կ'ուզե՞ս որ ըսեմ... որովհետեւ ես
իմ կիսս շատ կը սիրեմ:

ՇՈՒԾ.— Ուրեշ անգամ չըսես ատիկա,
աչքդ կը հանեմ:

ՎՀՆ.— (Խոյս տալ փորձելով) կը սիրեմ
կնիկս, կը սիրեմ կնիկս... Ես չեմ ուզեր ան-
հաւատարիմ ըլլալ իրեն:

ՇՈՒԾ.— Եւ սակայն, Պարոն, պիտի ստիպ-
ուիս խարել զինքը:

ՎՀՆ.— Երբէ՛ք... կը նախընտրեմ ա-
մէն ինչ խոստովանել:

ՇՈՒԾ.— Ի՞նչ կիցեր ես... Բսէ՛, խոս-
տովանէ... Բայց այդ բոլորը կացութիւնը
չիրկեր: Ես քուկդ եմ աշխարհը իրար եսկ
անցնի: Ես տկար կի՞ն մըն եմ...

ՎՀՆ.— (մեկուսի) Եթէ տկարը այս է,
Աստուած պահէ մէկալէն:

ՇՈՒԾ.— Բայց էրիկ-մարդու մը չափ ու-
ժով եմ: Ես քեզ այդ տիսմար կնկանդ ձեռքէն
շատ դիւրին կ'առնեմ:

ՎՀՆ. — Եթէ դուն օճախս մարես, էր-
կանդ ամէն ինչ կ'ըսեմ:

ՇՈՒԾ. — Կարո՞ղ ես:

ՎՀՆ. — Վատահարար: Եւ այն ատեն...
խերդ կ'անիծուի:

ՇՈՒԾ. — Կը կարծե՞ս: Խեղճ տղա՛յ: Ար-
դիւնքը ըսե՞մ հիմակուընէ: Ես՝ ապահարզան,
դուն ապահարզան, իրար կ'առնենք:

ՎՀՆ. — Ի՞նչ աղուոր երեկոյթ, ըսելիք
չկայ նզովից արմատ: Բայց դուն ի՞նչ ունիս
երակներուղ մէջ, արի՞ւն թէ ուրիշ բան:

ՇՈՒԾ. — Քեզ ունիմ երակներուս մէջ ...
Դուն ես որ արիւնը կը փոխանորդես երակնե-
րուս մէջ եւ եթէ փորձես պրծել, Աստուած
այնտեղ գործ չունի... Համբուրէ՛ նայիմ Շու-
շանդ է:

ՎՀՆ. — Ո՞չ:

ՇՈՒԾ. — Ի՞նչ... Կ'ըմբոստանա՞ս: (Զեռք
կը վերցնէ):

ՎՀՆ. — (համբուրելով) Ա՛ռ:

ՇՈՒԾ. — Ատէլ լաւը (Վահյան դարձեալ
կը համբուրէ) Այդպէ՛ս: Եւ ըսէ՛ որ կը սիրես
ինձի:

ՎՀՆ. — Կը սիրեմ քեզի:

ՇՈՒԾ. — Ուրիմն այս իրիկուն ժամը ու-
թին կը սպասեմ քեզի... Բայց պէտք է ըսեմ

քեզի որ եթէ քառորդ ժամը մը ուշանաս, տանդ
դուռը ձեռք կ'առնեմ:

ՎՀՆ. — Աղէ՛կ, աղէ՛կ, Պիտի գա՞մ:

ՇՈՒԾ. — Շատ լա՛ւ, Պարոն ըմբոստ: Ժը-
պիտ մը, շուտ, Շուշանիդ որ քեզ կը սիրէ ու
կը պաշտէ, որ գերի է դարձած քեզի (Վահյան
քոնի ժայիտ մը կ'ընէ) Այդպէ՛ս... Ես ներս
կ'երթամ հիմա, կարգս եկած ըլլալու է: Ցտե-
սութիւն, խո՛ւշա: (Դուրս կ'ելլէ)

Ե Օ Թ Ե Ր Բ Ո Ր Դ Տ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՎԱՀՅԱՆ, ՅԵՏՈՅ ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ ԵՒ ՄԱՆԵԻԿ

ՎՀՆ. — Կացութիւնս յետին աստիճանի
աղուոր է եթէ ճամբորգութիւնս յետաձգեմ,
կինս պիտի նեղանայ: Եթէ ճամբորդեմ, Շու-
շանը օձիքիս փակած ըլլալով, կեանքս ըջուն
դժոխքի մը պիտի փոխուի և վերջ ի վերջոյ
կինս ամէն բան պիտի իմանայ... Ի՞նչ ապուշ
եմ եղեր երեք տարի առաջ: Իրաւունք ունին
երբ ձուկ որսալը վտանգ է, կ'ըսեն: Եւ ահա
կեանքս թունաւորուեցաւ:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ. — (Ներս կը մտնէ) Դուք
հո՞ս էք: Ներսը ձեզի սպասեցին: Եւ տեսնելով

որ չեք երթար, ձեր տեղը առին: Տիկ. Վարդուհի որոշեց վերջապէս խաղին մասնակցիլ: ՎՀՆ.— Հապա՝ կինո:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Անիկա իր տեղը Տիկ. Շուշանին տուաւ: Հիմա քովն ի վեր խաղը կը կառավարէ:

ՎՀՆ.— Գուշակութիւնս ճիշտ ելաւ:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Նեղսրտած կ'երեւիք, Պարոն Վահան: Արդեօք անհանդի՞սս էք: Բա՞ն մը ունիք:

ՎՀՆ.— (անուշադիր) Այո՛... ո՛չ (մէկուսի) Զուկ որսալը...

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Եթէ չէ՞ք նեղուիր կըրնա՞մ ձեր հետը մնալ: Խիստ համակրելի էք:

ՎՀՆ.— Շատ ազնիւ էք Պարոն:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Անկեղծ եմ: Քիչ առաջ, շատ հարեւանցի ձեւով մը մեզ իրարու ներկայացուցին... ահա՛ այցաքարտս: (Թղթապանակէն այցաքարտ մը կը իհանէ եւ կուտայ Վահանին)

ՎՀՆ.— Շնորհակա՞լ եմ... իմինս:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— (կը կարդայ) Վահան Շարլունի, զրոլ: Ո՛հ, ես շատ կը սիրեմ գրողները:

ՎՀՆ.— (կը կարդայ) Բրօֆէսէօն Յակոբ, Բրօֆէսէօն ընդհանուր գիտութեանց: Ես

կը կարծէի որ միայն քնածութեամբ կը զբաղէիք:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Այո՛, որարապոյ ժամերուս: Շատ հետաքրքրաշարժ գիտութիւն մըն է:

ՎՀՆ.— (իեգնոտ) Իրա՞ւ: Եւ գուք կը հաւատաք այդ յիմարութիւններուն:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— (զարմացած) Յիմարութիւններ... Ես աչքերովս տեսած եմ, արդիւնաբեր, համոզիչ փորձեր տեսած եմ, ենթականեր զորս կը քնացնէին և որոնք կէտ առ կէտ մագնիսացող անձին պայմաններուն կը հատեւէին հաւատարմօրէն:

ՎՀՆ.— Չտեսած չեմ կրնար հաւատալ... Անկարելի է որ քնացած մէկը ուրիշին խօսքին հնազանդի:

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Քնացած ըլլալու չէ միայն հնազանդելու համար: Զանազան ենթականեր, իրենց կամքէն աւելի զօրաւոր իշխանութեան մը ներքեւ զանուելով, արթուն վիճակի մէջ իսկ կը հնազանդին...

ՎՀՆ.— (մէկուսի) Կ'արդուկէ կոր: (Բրօֆէսէօն) Անկարելի է: (ուսերը կը ցնցէ)

ԲՐՈՅ. ՅԱԿՈԲ.— Ինչո՞ւ այդ թերահաւատ շեշտը կ'առնէք Պարո՞ն Վահան: Ես աչքերովս տեսած եմ, այնպէս ինչպէս որ ձեզ կը տես-

նեմ հիմայ, արթուն մարդիկ, որոնք, հակառակ իրենց կամքին, կը հսազանդէին տրուած հրահանգներուն։ Սա ալ ըսեմ որ դուք, Պարոն Վահան, սքանչելի մագնիսացնող մըն էք...

ՎՀՆ.— Ե՛ւ այդ ուրկէ՞ տեսաք։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Քիչ առաջ, երբ ձեզ կը դիտէի, տեսայ որ ձեր նայուածքէն եզական հազուադէպ իշխանութիւն մը դուրս կը ցայտէր։ Դուք բնաւ չէք փորձած ձեր դիմացինը քնացնել...

ՎՀՆ.— Ես անձամբ, բնա՛ւ . . . բայց տեսած եմ մարդիկ որոնք զրածներս կարդալով քնացած են։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Եւ դուք բնաւ չէ՞ք փորձած ձեր ազգականները կամ բարեկամները քնացնել։

ՎՀՆ.— Բնա՛ւ։ Ես եթէ փորձած ըլլայի, դուք կը կարծէի՞ք որ յաջողէի։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Ապահովաբա՛ր։ Ձենէ դուրս ցայտով առանձնատուկ իշխանութիւնը ջախջախիչ փաստ մըն է ձեր քնածական կարողութեան։

ՎՀՆ.— Այդքա՞ն . . . ինձի նայեցէ՞ք . . . ձի՞շտ է որ մաքնիսացնող մը կարող է ենթակային միտքը կառավարել ուզածին պէս։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Բնակա՛ն է։

ՎՀՆ.— Ենթաղբենք որ կին մը, ամուսնացած կին մը երիտասարդի մը օձիքին փակած ըլլայի . . .

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Կը պատահի . . .

ՎՀՆ.— Ակու՞ս, այս' . . . Ուրեմն՝ եթէ երիտասարդը կնկան ըսէ։ — «Կը հրամայեմ քեզի որ այլեւս գիս չսիրես» այդ երիտասարդին օձիքը կը ձգէ՞ թէ ոչ։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Անկասկա՛ծ . . . բայց լաւագոյն է որ երիտասարդը հրամայէ անոր ուրիշը սիրել . . . ամուսինը, օրինակի համար . . .

ՎՀՆ.— Ամուսինը անկարելի է։

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Ուրեմն ոեւ մէկը . . . և կինը կը հնազանդի, ապահով եղէք։

ՎՀՆ.— Նոյն իսկ եթէ ընտրեալը . . . Պ. Ադոկտոսը ըլլար . . .

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Բնականաբա՛ր . . . բայց սիրու ունենալու է այդ ցուցանքին վրայ նայելու համար։

ՎՀՆ.— Մեզի ի՞նչ . . . Աւետարանը անհաւատարիմ կնոշ համար գութ չունի . . . բայց ինչպէ՞ս գործելու է . . .

ԲԲՕՅ. ՅԱԿՈԲ.— Կը կեղրոնացնէք ձեւ, կամքը, և կը ցանկաք ձեր բոլոր ուժեւ գներ իշխանական կարողութիւնը ուղը լով ըն-

տրուած ենթակային վրայ, Յեսոսյ հրամանը
կուտաք բարձր կամ ցած ձայնով:

ՎՀՆ.— (փորձելով) Կեցէ՞ք, Կեցէ՞ք... այս-
պէս: Կը ցանկամ, կը ցանկամ...

ԲԻՕՖ. ՅԱԿՈԲ.— Ո՛չ այդպէս: Գնդակ չէ
որ կը խաղաք: Այսպէ՞ս: Հրամայակա՞ն: Կը
ցանկամ, կը ցանկամ:

ՎՀՆ.— Հասկցայ, հասկցայ (Բրօֆ. Յակո-
բին ըրածը կապկելով) Կը ցանկամ որ Ագո-
կոռուը սիրես...

ԲԻՕՖ. ՅԱԿՈԲ.— (ետ ետ կ'երթայ) Ուշա-
գրութիւն, իմ վրաս չէ...

ՎՀՆ.— Այո՛... կը ցանկամ որ Ագոկոռուը
սիրես... (կը դառնայ դէպի դուռը)

ԲԻՕՖ. ՅԱԿՈԲ.— Լա՛ւ է այդպէս: Շատ
լաւ է:

ՎՀՆ.— կը ցանկամ որ Ագոկոռուը սի-
րես: (Դուռը կը բացուի: Ներս կը մտնէ Ման-
նիկ, կը դողդոյայ):

ԲԻՕՖ. ՅԱԿՈԲ.— Շատ լաւ է այդպէս...

ՎՀՆ.— Բայց անկարելի բան է . . . (Ման-
նիկին) Ի՞նչ կայ:

ՄԱՆ.— (Երազէ մը արթնցածի պէս) Պա-
պ'ն, Տիկին Վարդուհին ապուշի մը պէս կը
այ կոր եղեր:

ՎՀՆ.— (խիստ) Մաննի՛կ:

ՄԱՆ.— Պ. Լեռնը այդպէս ըսաւ... եւ
խնդրեց Պ. Բրօֆէսէուէն որ գայ Տիկինին տե-
ղ առնէ:

ԲՐՕՖ. ՅԱԿՈԲ.— Իսկոյն: (Կ'առաջանայ)
Դուք փորձեցէք ճեր կարողութիւնը, փորձեցէք
տակաւին: Արդիւնքը կը տեղեկացնէք ինծի
քիչ յետոյ: (Դուռս կ'ելլէ)

Ո Ւ Թ Ե Բ Բ Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՎՀՆ.— ՄԱՆՆԻԿ ԵԽ ԱԴՐԿՑՈՍ

ՄԱՆ.— Պարոնը խմիչ չ'ուզեր:

ՎՀՆ.— Ո՛չ, շնորհակալ եմ:

ՄԱՆ.— Կրնա՞մ վերցնել:

ՎՀՆ.— Այո՛, այո՛: (Մէկուսի) Ի՞նչ ա-
պուշ եմ... ելեր սա՛ անօթին մտիկ կ'ընեմ:
Թելազրութիւն, քնածութիւն... սուտ սուտ
բաներ, լեռնին պէս աւանակները խարելու
միջոցներ:

ՄԱՆ.— Ի՞նչ ըսիք, Պարո՞ն:

ՎՀՆ.— Ոչի՞նչ, ... ոչի՞նչ (Մաննիկ դուս ել-
լելու կ'ըլլայ, ներս կը մտնէ Ադոկտոսը):

ԱԴՐԿ. — Ներողութիւն, Պարո՞ն, գիրք մը
մոռցեր եմ այստեղ . . . Մաննի՛կ . . .

ՄԱՆ. — Ա՛խ, Պարոն Ագոկառոս:
ԱԴՐԿ. — Ո՞ւր թխմեր են զիրքերու:
ՄԱՆ. — (մօտենալով) Ես չբայ անոնց,
 գիտե՞ս...
ԱԴՐԿ. — Տեսայ, տեսայ, հոս են զրեր . . .
ՄԱՆ. — (փէշէն բռնած) Վայլրեան մը..
 Ստանկ մի՛ երթար, Պ. Ագոկառոս:
ԱԴՐԿ. — Ի՞նչ կ'ուզես: Պէտք է երթամ,
 Ախատանք ունիմ: (վահանին) Երեւակայեցէք,
 Պարոն, որ վարը, բակը, սէտիրին վրայ դրին
 ինձի: (վահան մտածկու չպատասխանէք)
ՄԱՆ. — Զ'ըլլալիք բան... Քեզի պէս մէկը...
 ուշիմ, գիտնական...
ԱԴՐԿ. — Վրաս մի՛ ինդար, Մաննիկ:
ՄԱՆ. — Իրաւ կ'ըսեմ... մանաւանդ քեզի
 չափ հաճելի մէկու մը...
ԱԴՐԿ. — Պակա՞ս ես . . . Քիչ առաջ ցու-
 ցանք կ'ըսէիր ինձի:
ՄԱՆ. — Աղէկ մը չէի նայած... Հիանալի,
 աղուոր զլուխ մը...
ԱԴՐԿ. — (զարմացած) Ի՞նչ:
ՄԱՆ. — Շատ կը հաւանիմ կոր քեզի, գի-
 տե՞ս... շա՞տ:

ԱԴՐԿ. — Խենդացա՞ր, աղջի՛կ . . .
 (դուրս ելլելու վրայ)

ՄԱՆ. — (կր քսուըւտի) Պ. Ագոկառո՞ս... տա-

րօրինակ ուժ մը գէպի քեզ կը տանի ինձի...
ՄԻՆԱԿ տեղ մը, բան մը պիտի ըսեմ քեզի...
ԱԴՐԿ. — Օձիքս ձգէ, աղջի՛կ . . . Պ. Վա-
 հան, պաշտպանացէք ինձի:
ՎՃՆ. — Հետաքրքրկան է: Միթէ...
ՄԱՆ. — Եկո՞ւր, աղուորս, սէտիրին վրայ,
 վարը, բակը... եկուր որ պաչ ընեմ քեզի:
ԱԴՐԿ. — Զէ՛, չէ՛ . . . չեմ ուզեր . . . չեմ
 ուզեր:
ՄԱՆ. — (փէշէն քաշելով) Ուզես չ'ուզես աս
 է... ես քեզի շատ կը սիրեմ կոր... կը ցանկատ
 կոր քեզի... շուտ, խոհանո՞ց: (Քաշկութելով կը
 տանի)

ԱԴՐԿ. — (կրուելով) Օգնութի՛ւն, խենդ
 է, խենդ է...

Ի Ն Ն Ե Ր Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ա Բ Ա Ն

ՎԱՀԱՆ (մինակը)

ՎԱՀ. — Զարմանալի՛ բան . . . Ասոր չէի
 սպասեր: Աչքերովս իսկ տեսած ըլլայի պիտի
 չհաւատայի... Սա՛ Բրօֆէսու Յակոբին ըսած-
 ները ճշմարի՞տ են արդեօք: (Պահ մը) Այո, երբ
 կամքս կեդրոնացուցի, Մաննիկ ներս մտաւ:

Ուրեմն՝ ան է որ ընդունեց իմ իշխանական կարողութիւնս... այո՛... այո՛... Ուրեմն՝ իմ կամքս է որ կը գործէ հիմա... եւ արդէն «տարօրինակ ուժ մը դէպի քեզ կը տանի ինծի» ըստ Մանսիկը. Աս աղէ՛կ... ապացոյցը մէջ-տեղն է... Աս աղէ՛կ... Ո՛հ, քանի որ այդպէս է, ժամանակ չկորսնցնենք և գործի սկսինք, (դուռին դարձած) եղիպոս կ'ուզես երթաւ, հա՞, Շուշան, հիմայ կը տեսնաս... (կը կենայ) Լա՛ւ, բայց մէկու մը վրայ յաջողիլս չնշանակէր որ միւսին վրայ ալ պիտի յաջողիմ... Ի՞նչ կարեւորութիւն ունի: Փորձելով մարդ բան չկորսնցնէր: (Կերթայ դուռը կը բանայ: Դունէն քովնոտի սենեակը կը տեմնուի: Այլերը նըստած են եւ թուղթ կը խաղան, իսկ կլները, ոտքի, կը տեսակցին:) Կեդրոնացնեմ կամքս... (Ձեւ մը կ'ընէ) Այսպէ՛ս: «կը ցանկամ որ Աղոկտոսը սիրես: Կը ցանկամ որ Աղոկտոսը սիրես:» Պրծա՛ւ... մէյ մըն ալ որպէսզի ուժով մը փախչի: «կը ցանկամ որ Աղոկտոսը սիրես:» Նզովից արմատը: Հիմա, եթէ արդիւնք մը ձեռք չըրեմ, կը նշանակէ որ այդ Բրօֆէսէոն Յակոբը ախմախին մէկն է: Ես երթամ Աղոկտոսը բերեմ հիմա:

ՏԱՍՆԵՐՈՐՈԴ ՏԵՍԱԿ ՏԵՍԱԿ
ՇՈՒՇԱՆ, ՍԵԼՄԱ. և քիչ յետոյ ԱԴՈԿՑՈՒ

ՍԵԼՄԱ.— (Կը շարունակէ սկսուած խօսակցութիւն մը) Այո՛, սիրելիս, իրաւունք ունիս... Մեր գոյքերը մէկ տեղ մը հաւաքելու ենք:

ՇՈՒՇԱ.— Ուրեմն՝ դուն կառքը ինծի պիտի դրկես գոյքերով միատեղ: Իմիններս ալ կը բեռցնեք կառքին վրայ և շիտակ քարափ:

ՍԵԼՄ.— Այս ճամբորդութիւնը խելքս դիմէս կը տանի կոր:

ՇՈՒՇԱ.— Իսկ եթէ ամուսինդ հակառակի...

ՍԵԼՄ.— Ամուսինս իմ խօսքէս դուրս չ'ելլէր... շատ թոյլ է...

ՇՈՒՇԱ.— Գիտե՛մ:

ՍԵԼՄ.— Հաճոյակատար է ասոր հետ մէկ-տեղ: Եթէ աւելի մտերմանաս հետը, պիտի տեսնաս ինչ սքանչելի մարդ է:

ՇՈՒՇԱ.— Գիտե՛մ, գիտե՛մ:

ՍԵԼՄ.— Շատ աւելի հիանալի մարդ է մտերմութեան մէջ: (Ներս կը մտնէ Ադոկտոս)

ԱԴՈԿ.— Ուժ... հաղիւ ձեռքէն պրծայ... (Նշանակութիւն կիները) Ո՛հ, հազար ներողութիւն տիկիններ: Գիրքերս փնտոելու եկած եմ:

ՇՈՒԾ. — Մենք ձեզի չենք նեղեր, Պարո՞ւս:
ՍԵԼՄ. — (Յանկաբը փոխուած) Ո՞հ... ո՞վ
է... այս Պարոնը:

ՇՈՒԾ. — Կարծեմ դ. Ադոկտոսն է, Պ. Լեռ-
նին քարտուղարը:

ԱԴՐԿ. — (Գետնէն գիրքերը ժողվելով) Ե-
ղաւ... կը մեկնիմ, տիկիններ:

ՍԵԼՄ. — Ինչո՞ւ այսչափ շուտ... Պ. Ադո-
կտոս, այնպէս չէ... .

ԱԴՐԿ. — Այո՛, Տիկի՞ն, Ադոկտո՞ս:

ՍԵԼՄ. — Պ. Լեռնին քարտուղարը:

ԱԴՐԿ. — Այո՛, Տիկի՞ն... Ներողութիւն
կը խնդրեմ այս թափթփած երեւոյթովս ներ-
կայանալուս համար: Յանցանքը իմս չէ...
աղջկը խենդեցեր է... .

ՍԵԼՄ. — Հոգ չէ... հոգ չէ...

ԱԴՐԿ. — Տիկինը յետին աստիճանի նե-
րողամիտ է: (Մէկուսի) Անանկ մը կը նայի
կոր որ կարծես պիտի լափէ ինծի:

ՍԵԼՄ. — Նստեցէ՛ք, Պարոն Ադոկտոս: Շատ
մեծ հաճոյք պիտի առնեմ ձեզի հետ խօսակցե-
լով:

ՇՈՒԾ. — (Ղարմացած) Սելմա՛, Սելմա՛...

ՍԵԼՄ. — (անուշադիր) Անհունորէն հա-
մակրեցայ ձեզի, Պ. Ադոկտոս:

ԱԴՐԿ. — Երախտապարտ եմ, Տիկի՞ն, և
չուարած միանդամայն:

ՍԵԼՄ. — Զարմանալի՛ է: Անյաղթելի՛ ուժ
մը դէպի ձեզ կը մղէ ինծի:

ԱԴՐԿ. — Հէ

ՇՈՒԾ. — Այդ ի՞նչ խօսք էր...

ՍԵԼՄ. — Ես ձեզ չէի տեսած բնաւ: Ի՞նչ
նուըր գիծեր, ի՞նչ ուշիմ գէմք, Աստուած իմ
գ. Ադոկտոս, ես ձեզի շատ հաւնեցայ, գիտէ՞ք:

ԱԴՐԿ. — Երա՞զ է թէ երականութիւն...
Արդեօք մէկէն ի մէկ աղուորցա՞յ..

ՇՈՒԾ. — Ո՞չ, Պարո՞ւս, ո՞չ, չէք փոխուած:
Բայց լաւ կ'ընէք եթէ շուտ մը կծիկը գնէք
հոսկէ:

ՍԵԼՄ. — Հոս կեցէ՛ք, Պ. Ադոկտոս: Ես
այնքա՞ն երջանիկ եմ, այնքան ուրախ ձեզ իմ
մօսս ունենալուս... .

ՇՈՒԾ. — Զեմ հաւնիր կոր: Խենդեցա՞ւ
արգեօք:

ԱԴՐԿ. — Սպասուհիին պէս, Տիկի՞ն, ճիշտ
սպասուհիին պէս:

ՍԵԼՄ. — Ինծի նայեցէ՛ք Պ. Ադոկտոս...
Ալ չեմ կրնար կոր դիմանաւ: Համբուրել կ'ու-
ղիմ:

ԱԴՐԿ. — Ա՞հ, Տիկի՞ն, չ'ըլլալիք բան է...
Քիչ առաջ ես մերժեցի նաեւ սպասուհին... .

ՍԵԼՄ.— Պ. Աղոկառ'ս, կը պաղատ .

ԱԴՐԿ.— Բայց, Տիկին, տեղս պիտի կոր-
սնցնել տաք ինծի... .

ՍԵԼՄ.— Կը սիրեմ ձեզ, Պարոն Աղոկ-
առ'ս, կը սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ:

ՇՈՒԾ.— Իհնդգեցա'ր Սելմա:

ՍԵԼՄ.— Հանգիստ ձգէ ինծի: Կը սիրեմ
կոր հասկցա՞ր:

ԱԴՐԿ.— Տիկին... կը պաղատիմ... թող
տուէք ինծի... ես կոյս եմ...

ՍԵԼՄ.— Այդ աւելի՛ լաւ...

ԱԴՐԿ.— Ես իմ կեանքս նուիրած եմ գի-
տութեան... Ապագաս կը խորտակեք, Տիկին:

ՍԵԼՄ.— Հո՛գս հո՛գս... ինչ կ'ուզես ան
եղիր... Մի՛ փախի՛ր, մի՛ փախի՛ր: Աշխարհիս
ծայրն ալ երթաս ետեւէդ պիտի գամ, Աղոկառ'ս:

ԱԴՐԿ.— Զ'ըլլա՛ր, չ'ըլլա՛ր... (Շուշանին)
Տիկին, զապեցէք, կ'աղաշեմ (Գուրս կ'ելլէ)

ՍԵԼՄ.— Իմս ես, Աղոկս, իմս ես (Ետե-
լէն գուս կ'ելլէ)

Տ Ա Ս Ն Է Մ Է Կ Ե Ր Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՇՈՒԾԱՆ—ՎԱՀԱՆ

ՇՈՒԾ.— Սարսափելի՛ բան... Աչքովս տես-
նէի պիտի չհաւտայի... Սելման այնքան քաղ-

ցըր, այնքան խաղաղ բնութեան տէր... և դաս-
տիարակուած կին մը... ես ալ երբեմն էրիկ-
մարգոց վրայ նետուած եմ թէեւ, բայց ո՛չ
այնքան վրան—բաց ձեւով մը:

ՎՀՆ.— (Ներս մտնելով) Պարապը ելայ:
Ժամ մըն է սա ցուցանքը կը փնտոեմ... վա-
րը, բակը չէ:

ՇՈՒԾ.— (Խնդալով) Պ. Աղոկտոսը... հոս
էր վայրկեան մը առաջ:

ՎՀՆ.— Դուն տեսա՞ր զինքը:
ՇՈՒԾ.— (Խնդալով) Այս', այս'... և մինչեւ
իսկ հետն ալ խօսեցայ:

ՎՀՆ.— Ես... ինչպէ՞ս գտար զինքը:
ՇՈՒԾ.— Ցուցանք մը:
ՎՀՆ.— Այդքա՞ն:
ՇՈՒԾ.— Զարհուրելի՛... հասարա՞կ... աղ-
տո՞տ:

ՎՀՆ.— Անկե՞զծ... ես զինքը ինձմէ աղ-
տոր կը կարծէի:

ՇՈՒԾ.— Այդ ուրկէ՞ հանեցիր:
ՎՀՆ.— (մէկուսի) Նզովից արմատը... Զա-

ջողեցաւ:
ՇՈՒԾ.— Բայց... պէտք է ըսեմ որ ամէն
մարդ իմ կարծիքս չ'ունի այդ մասին:
ՎՀՆ.— Այս', այս'... զիտեմ... Մանսիկը,
օրինակի համար...

ՇՈՒԾ.— Ո՞չ, ո՞չ, ո՞չ, Մաննիկին համար չէ ըսածս: Թէև չարասիրտ կին մը չեմ, բայց պարտականութիւն մը կը համարեմ կանուխէն չարիքի մը առաջքը առնել ամէն բան իմաց-նելով քեզի: Կինդ կը խարե... քեզի և կամ շխտակը ըսելու համար, աի-ի-տի խարէ քեզի... եւ սանկ ու նանկ չէ, արտառոց ձեւով մը:

ՎՀԵ. — Խնդալիք բան է ըստածդու... Կինս
ինձի խարէ... Եւ որո՞ւ հետ, Տիկին, կրնայի
հասկնայ:

ՇՈՒԾ.—Աղոկտոսին հետ:

ՎՀՆ.— (իմութելով) Իրա՞ւ... Ուրիշ անգամ եթէ զբարտելու ըլլաս, քիչ թէ չատկուուիիք սուտեր նայէ որ զլտորես:

ՇՈՒԾ, — ԶԵ՞ս հաւատաբ: Խսկ եթէ ըսեմ
որ իմ ներկայութեանս կինդ անոր վիզը պլ-
ուեցա... պիտի հաւատա՞ս:

ՎՀԵ. — Զար կատակէն չեմ ախորժիր...

ՇՈՒԽ. — Քեզի կ'ըսեմ որ Սելման իմ առ-
ջեւս շատ ամօթալի բաներ ըսաւ Ադոկտոսին:
ՎՀՆ. — (Կամաց կամաց մոտահիոգութելով)
Ե... Ե...

ՇՈՒԾ. — Եւ այնքան առաջ գնաց որ մինչեւ իսկ «անծանօթ ուժ մը» ըստ «քեզի կը սեռէ ինծի...» եւ ետեւէն գնաց:

$\Psi \zeta v = b_{pw^e} v$, $b_{pw^e} v$:

ՇՈՒԾ.— Ի՞նչ կը պոռաս:
ՎՀՆ.— Անձանոթ ուժը... զօրութիւնը...
զօրութիւնը:

ՃՈՒԾ.— Ի՞նչ զօրութիւն...
ՎՀՆ.— Սիսալ տեղէ գացեր... սխալ կըն-
կան մը վրայ... գէշ նշան եմ առեր: Քու վրադ
էր որ թափել ուղեցի և գացեր եկեր իւր կնոջս
վրայ եմ թափեր:

ԴՈՒՇ. — Թափելիքը ի՞նչ է... չափակը
նար կոր:

ՎՀՆ.— Սիսակեր եմ... ևս ցանկացա՞ր չ՛ը
որ դուն սիրես Աղոյկառաը և ո՞չ թէ կինս...
Տաշ եւս... Առականո՞սը սիրեմ... .

ՎԱՐՈՒՅԻՆ. — Ե աւ օքով կ լ ու
ՎՀԵ. — Այո՛, այո՛, դուն պիտի բռնուէիր
անոր... ՏԵՇ Աստուած, բան մը չպատահած եր-
թամ կինս ձեռքէն առնեմ... Ախ, բան մը ե-
ղած չ'ըլլայ... (Փազելով դուքս կ'ելլէ)

ՏԱՐԱՆԴԻ ԿՈՒԽԵՐԸ ՈՐԴ ՏԵՍԱՇԱՆ

ՀՈՒՅԱՆ — ԱԴՐԵՏՈՒ

ՇՈՒԾ. — Ես բան չհասկցայ: Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըլլայ կոր..., ես բան չհասկցայ...
այնքան որ գլուխս կը դառնայ (դուրսէն՝ կը ուրտուրքի աղմուկ) իրար կը ծեծեն կոր, ի՞նչ է:

ԱԴՐԻ. — (դուռը իրելով ներս կը մտնէ) Օգնութիւնն... Ազատեցէք: Մեղանէ պիտի ինծի... .

ՇՈՒՇ. — Ի՞նչ պատահեցաւ:

ԱԴՐԻ. — Տիկին Սելման բռնի համբուրել կ'ուզէր ինծի... Ես դէմ կը դնէի, Տիկին: Բայց ան ինձնէ ուժով էր... և եթէ Պ. Վահանը ատենին չհասնէր, վատահ եղէք որ կուսութիւնս վրայ կուտայի...: Արիւն քըրտինքը մտայ, Տիկին... .

ՇՈՒՇ. — (գլխէն մինչեւ ոտքերը Աղոկտոսը կը չափչիէ) Հանգիստ ըրէք, Պ. Աղոկտոս:

ԱԴՐԻ. — Ես ի՞նչ պիտի ընեմ չիմա... Պ. Վահանը Պ. Լեւոնին պիտի գանդանտի... Եւ տեղս պիտի կորսնցնեմ... Կ'երդնում, Տիկին, որ ես բան մը չ'ըրի Տիկին Սելմային որպէսզի իր պարտականութիւնները ուրանայ:

ՇՈՒՇ. — (միշտ զինքը դիտելով) Վատահ եմ այդ մասին:

ԱԴՐԻ. — Ի՞նչ օր էր, այսօր... Ի՞նչ հանգիստ էի... Ամենէն առաջ, սպասուիին էր որ վրաս նետուեցաւ, և ետքը, այս Տիկինը... Ի՞նչ ունին, այսօր: Եւ կ'երթան կուգան ինծի կը գակին կոր: Տգեղ ըլլալս չեն տեսներ կոր, ի՞նչ է...

ՇՈՒՇ. — (մօտենալով) Ո՛չ, ո՛չ..., Դուք բնաւ տգեղ չէք:

ԱԴՐԻ. — Ես ինչ ըլլալս չեմ զիմնը:

ՇՈՒՇ. — Ո՛չ, ո՛չ, Դուն բնաւ տգեղ չես և սո կը զգամ որ անծանօթ ուժ մը քեզի կը բերէ ինծի:

ԱԴՐԻ. — Ի՞նչ, դուք ալ... ալ մարդ չմնաց:

ՇՈՒՇ. — Ադո'կ, Ադո'կ... անօթի՛ եմ:

ԱԴՐԻ. — Աս պիտի ուտէ ինծի:

ՇՈՒՇ. — Անօթի՛ եմ, կ'ըսեմ կոր քեզի՛: Ադո'կ, չուտ, տուր չրթունքդ, ծարաւ եմ համբոյրիդ...

ԱԴՐԻ. — Բայց ի՞նչ ընեմ, տէր Աստուած, որ բոլոր կիները կը խենդանան կոր վրաս:

ՇՈՒՇ. — Եկո'ւր... սա՛ բազմոցին վրայ... Եկո'ր կ'ըսեմ, չուտ ըրէ, թէ ոչ աղուոր ծեծ մը կ'ուտես հիմա:

ԱԴՐԻ. — Աս յուզմունքները իմ ջիղերս ալ սաք հանեցին:

ՇՈՒՇ. — Աւելի՛ լաւ, աւելի՛ լաւ...

ԱԴՐԻ. — Եիրն եմ անիծեր անբիծ գիտնականին, տամարներուս մէջ արիւնս սկսաւ բաներ մը ըլլալ, գլուխս իմս չէ, զիրքս արդէն կորսնցուցի, անունս վրայ տուի... Ալ բան հոգս չէ...

ՇՈՒՇ. — Կեցցե՞ս: Այդպէս որ քեզ ունե, նաև կ'ուզեմ... Պիտի ջախջախեմ քեզի, թեւեւ բուս մէջ պիտի ջզմէմ քեզի, պիտի ցաւցունեմ, պիտի խածնեմ քեզի...

ԱԴՐԿ. — Ի՞նչ կ'ուզես ըրէ. ըայց գիտեիր որ ես քու հախէդ դիւրաւ կուզամ, ու բովհետեւ քառասունը ութը տարի կ'ընէ որ...

ՇՈՒՇ. — Կարճ կապէ՛... և եկո՛ւր: (Շուշն բազմօղին վրայ կը նետէ զայն եւ ինքն ալ կը նետուի անոր վրայ):

Տ Ա Ս Ն Ե Բ Ե Ք Ե Բ Բ Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՆՈՅՆՔ, ՀՐԱՆԴ, ԼԵՒՄՆ, յետոյ
Բ Ո Լ Ո Ր Ը

ՀՐԱՆԴ. — Ասցէ՛ք, Տիկի՞ն, ասցէ՛ք: Տէր Աստուած, ի՞նչ կը տեսնեմ:

ԱԴՐԿ. — ԱՌ, աՌ, Պ. Հրանդը...

ՀՐԱՆԴ. — Թշուառակա՞ն... կը մեոցնեմ քեզի:

ԱԴՐԿ. — (Փախչելով) Օդնութիւն... օգնութիւն (սենեակին շրջանը կ'ընէ այաբեկ) օգնութիւն, կ'ըսեմ չէ՞ք իմանար:

ՀՐԱՆԴ. — Պատառ պատառ կ'ընեմ, հում կ'ուտեմ...

ԼԵՒՄՆ. — Ի՞նչ կայ... իրա՞ր կը մեոցնէք, ի՞նչ է... (Լեցնելով Հրանդը) Բարեկա՞մ...

ՀՐԱՆԴ. — Իրաւոնքիս մէջն եմ կարծեմ քանի որ Պարոնը կնոջս թեւերուն մէջ տեսայ:

ՇՈՒՇ. — (Համբոյիներ զրկելով Աղոկտոսին) Այո՛, այո՛, ես քո՛ւկդ եմ, քո՛ւկդ...

ՀՐԱՆԴ. — Տիսա՞ք... Թշուառակա՞ն...

ԱԴՐԿ. — Յանցանքը իմս չէ...: Պիւյիւլէմիւ ըրին ինձի...

ԼԵՒՄՆ. — Այդ ի՞նչ է:

ՄԱՆ. — (Ներս մտնելով) Ագո՛կս... սիրակա՞նոս... ո՞ւր ես, քեզ կը փնտռեմ:

ԼԵՒՄՆ. — Մաննի՞կ: Մաննի՞կն ալ:

ԱԴՐԿ. — Բայց բոլորը, Պարոն, բոլորն ալ:

ՍԵԼՄ. — (Ներս մտնելով) Հոգի՞ս, հոգիս, ա՛ռ, տա՛ր զիս...

ԼԵՒՄՆ. — Տիկին Սելմա...

ՀՐԱՆԴ. — Ճար չկայ, սպաննելու եմ, խեղդիլու ամ:

ՎՀՆ. — (Ներսէն) Կեցէ՛ք... Յանցաւորը ես եմ, (Ներս կը մտնէ)

ԼԵՒՄՆ. — Եթէ գիտնայիր և լածները...

ՎՀՆ. — (Կ'երթայ կինը ասդին կ'առնէ Աղոկտոսին քովէն) Գիտե՞մ, գիտե՞մ: Եւ յանցաւորը ես եմ: Քնածութեան փորձ մը ընել ուզեցի:

ՇՈՒԾ. — Կեցցե՞ս: Այդպէս որ քեզ ունե, նաև կ'ուզեմ... Պիտի ջախչախեմ քեզի, թեւերուս մէջ պիտի ճզմնմ քեզի, պիտի ցաւցունեմ, պիտի խածնեմ քեզի...

ԱԴՐԻ. — Ի՞նչ կ'ուզես ըրէ. բայց գիտցեր որ ես քու համէդ դիւրաւ կուզամ, ու բովինետեւ քառասունը ութը տարի կ'ընէ որ...

ՇՈՒԾ. — Կարճ կապէ՛... և եկո՛ւրէ (Շուշան բազմոցին վրայ կը նետէ զայն եւ ինքնալ կը նետուի անոր վրայ):

Տ Ա Ս Ն Ե Բ Ե Ք Ե Բ Բ Ո Ր Դ Տ Ե Ա Ր Ա Ն

**ՆՈՅՆՔ, ՀՐԱՆԴ, ԼԵՒԹՆ, յետոյ
Բ Ո Լ Ո Ր Ը**

ՀՐԱՆԴ. — Անցէ՛ք, Տիկի՞ն, անցէ՛ք: Տէր Աստուած, ի՞նչ կը տեսնեմ:

ԱԴՐԻ. — Ա՛յ, ա՛յ, Պ. Հրանդը...

ՀՐԱՆԴ. — Թշուառակա՞ն... կը մեռցնեմ քեզի:

ԱԴՐԻ. — (փախչելով) Օդնութիւն... օգնութիւն (սենեակին շը անը կ'ընէ ախաբեկ) օգնութիւն, կ'ըսեմ չէ՞ք իմանար:

ՀՐԱՆԴ. — Պատառ պատառ կ'ընեմ, հում հում կ'ուտեմ...

ԼԵՒԹՆ. — Ի՞նչ կայ... իրա՞ր կը մեռցնէք, ի՞նչ է... (կեցնելով Հրանդը) Բարեկա՞մ...

ՀՐԱՆԴ. — Իրաւունքիս մէջն եմ կարծեմ քանի որ Պարոնը կնոջը թեւերուն մէջ տեսայ:

ՇՈՒԾ. — (իամբոյբներ ղրկելով Աղ ոկտոսին) Այո՛, այո՛, ես քո՛ւկդ եմ, քո՛ւկդ...

ՀՐԱՆԴ. — Տիսա՞ք... Թշուառակա՞ն...

ԱԴՐԻ. — Յանցանքը իմս չէ...: Պիւյիւլէմիշ ըրին ինծիփի...

ԼԵՒԹՆ. — Այդ ի՞նչ է:

ՄԱՆ. — (ներս մտնելով) Ադո՛կս... սիրակա՞նո... ո՞ւր ես, քեզ կը փնտռեմ:

ԼԵՒԹՆ. — Մաննիկ: Մաննիկն ալ:

ԱԴՐԻ. — Բայց բոլորը, Պարոն, բոլորն ալ:

ՄԵԼՄ. — (ներս մտնելով) Հոգի՞ս, հոգիս, ա՛ռ, տա՛ր զիս...

ԼԵՒԹՆ. — Տիկին Սեւմա...

ՀՐԱՆԴ. — Ճար չկայ, սպաննելու եմ, խեղդիլու եմ:

ՎՀՆ. — (ներսէն) Կեցէ՛ք... Յանցաւորը ես եմ, (ներս կը մտնէ)

ԼԵՒԹՆ. — Եթէ գիտնայիր եղածները...

ՎՀՆ. — (կ'երթայ կինը ասդին կ'առնէ Արոկտոսին քովէն) Գիտե՞մ, գիտե՞մ: Եւ յանցաւորը ես եմ: Քնածութեան փորձ մը ընել ուզեցի:

Լեհմն.— Թելադրութիւն արթուն վիճակի մէջ, չէ...

ՎՀՆ.— Այս', ուզեցի, պարզ հետաքըր-քրութեան համար, թելադրել տիկիններուն որդ. Ադոկտոսը սիրեն...

ՀԲԱՆԴ.— Եւ գուշ կը կարծէք որ այդ շինծու խօսքերը կլլո՞ղ մըն եմ ես...

Լեհմն.— Բայց ինչպէս ըրիր...

ՎՀՆ.— (իր կինը անոր անցունելով) Պարզէ: Վայրկեան մը բռնէ սուփկա որ բաեմ: Տիկինները հիւրանոցն էին, ճիշտ այնաեղ որ հիմայ Տիկին Վարդուհին կը տեսնէք... Կեղրոնացուցի կամքս ու ըսի, իւրաքանչիւրին... «կը ցանկամ որ Ադոկտոսը սիրես.—» (միեւնոյն ձեւերը կ'ընէ, կոնակը հանդիսականներուն, եւ երեսը դարձուցած դոււին ուրկէ տիկին Վարդուհին կը տեսնուի):

Լեհմն.— Եւ այդպէս, յաջողեցա՞ւ...

ԵՐԵՔ ԿԻՆԵՐԸ.— (միաբերան) Ադոկտոս'ս...
Ադոկտոս:

ՎՀՆ.— Հանդա՛րտ, հանդա՛րտ:

Լեհմն.— Ո՞չ, հաւտալս չգար կոր: (Տիկին Վարդուհիին որ ներս կը մտնէ) Անյպէս չէ... դուն ի՞նչ կ'ըսես ասոր:

ՎԱՐԴ.— (Չիտակ կը մտենայ Ադոկտոսի և ի համբուրէ զայն) Ադոկտոս'ս, պաշտելի՛ս...

Լեհմն.— Ա՞ս ալ, Այս չեղաւ... Արթնցո՛ւր շուտովի...

ՎՀՆ.— Ի՞նչ օգուտ,.. արթնցնելու ձեւը չգիտեմ... Քնացնելը սորվեցայ.. բայց արթընցնելը մոռցայ հարցնելու.—

Լեհմն.— Ի՞նչ պիտի լընենք հիմայ:

ՎՀՆ.— Բայց գուն պէտք է գիտնաս... չէ որ քնածութիւնով կը զբաղիս...

Լեհմն.— Այս', այս... բայց ես ալ չգիտեմ... Բրօֆէսէօ՛ս, Բրօֆէսէօ՛ս...

ԲՐՕՅ ՑԱԿՈԲ.— (ներս մտնելով) Ի՞նչ կայ...

Լեհմն.— Քնածները ինչպէս կ'անթնցը-նեն...

ԲՐՕՅ. ՑԱԿՈԲ.— Հաղար ու մէկ միջոց-ներ կան...

ՎՀՆ.— Ո եւ է մէկը ըսէք շուտով:

ԲՐՕՅ. ՑԱԿՈԲ.— Պարզ է... բայց ես ալ... մոռցեր եմ:

ԲՈՂՋՐԸ — 0' //

ԱԴՈԿ.— Սպասեցէ՛ք... ես երէկ այդ տեսան մը ընդօրինակեցի կարծեմ... եթէ լաւ կը յիշեմ պէտք է փչել քնացողներուն աչքերուն, ըսելով — «Արթնցէ՛ք, արթնցէ՛ք»

ՎՀՆ.— Շնորհակալ եմ: (Նախ Սեւմային յետոյ Վարդուհիին եւ ետքէն ալ Շուշանին մօտ երթալով) Արթնցէ՛ք... Արթնցէ՛ք... Արթնցէ՛ք... (Կիները կ'անթննան)

7597

ՍԵԼՄ.— Ի՞նչ կայ:

ՇՈՒԾ.— Գլուխս կը ցաւի:

ՎԱՐԴ.— Թմբե՞ր եմ, ի՞նչ է...

ՀՐԱՆԴ.— Ոչինչ, ոչինչ, բան չկայ... (վահանսին) Կառակը որ ըրիք չափէ դուրս ծիծաղելիք և վիրաւորիչ կը գտնեմ...: Արդէն ձեզ ճամբորդութեան մասնակցելու խոստումս ետ կ'առնեմ... եւ այսուհետեւ, ինչպէս առկէ երեք տարի առաջ, մենք կը գտնանք իրարու անձանօթներ...

ՎՀՆ.— Ո՛հ, շնորհակալ եմ, Պարո՞ն, մեծապէս երախտապարտ կը թողուք զիս...: (Մէկուսի) Մւգի... պրծայ, ա՛լ պրծայ:

ԼԵՒՈՆ.— Բայց խաղը կէս մնաց, զիստէ՞ք.

ԲՈԼՈՐԸ.— Ճիշտ է... ճիշտ է... (բոլոր մեկնելու կ'ըլլան)

ԱԴՐԿ.— (վշտոտ) Գացի՞ն... է՛հ, գացի՞ն.

Ա՛խ, կնիկները, կնիկները...

ԲՐՈՅՔ. ՅԱԿՈԲ.— Կեցէ՞ք, կեցէ՞ք... Աւ

նիկը մնաց արթնցնելիք...

ՎՀՆ.— Ճիշտ է, մոռցայ...

ԱԴՐԿ.— Ո՛չ, ո՛չ... Պարո՞ն... Ան ալ ինծի ձգեցէ՞ք գոնէ:

2013



Aug.

20